

Կ-665-15.11.2014,17.11.2014-SS-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ցանկում ներառված սահմանամերձ համայնքներին աջակցության ցուցաբերման գործընթացը:

Հոդված 2. Սահմանամերձ համայնքի բնակչության ռեզիստրում հաշվառված և սահմանամերձ համայնքում մշտական բնակություն ունեցող անձանց սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի եւ ոռոգման ջրի վարձավճարները մասամբ փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից:

Սահմանամերձ համայնքի բնակչության ռեզիստրում հաշվառված և սահմանամերձ համայնքում մշտական բնակություն ունեցող` բնական գազի օգտագործման բաժանորդ չհանդիսացող անձանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից տրամադրվում է փոխհատուցում սույն հոդվածի առաջին մասում նշված բնական գազի օգտագործման բաժանորդներին բնական գազի դիմաց տրամադրվող փոխհատուցման չափով:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից փոխհատուցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ցանկում ներառված սահմանամերձ համայնքների կողմից 2013 թվականին գազի և էլեկտրաէներգիայի տարեկան սպառված 1 բաժանորդի հաշվով միջինացված ծավալների ու տվյալ տարում փաստացի ծախսված ոռոգման ջրի վարձավճարի առնվազն 50 տոկոսը:

Փոխհատուցման ենթակա ծավալները և փոխհատուցման կարգը, յուրաքանչյուր տարվա համար սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների վարչական տարածքում գտնվող, մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող գյուղատնտեսական նշանակության եւ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքների համար վճարման ենթակա հողի հարկի եւ այդ հողերի վրա ունեցած անշարժ գույքի գույքահարկի տարեկան գումարը հարկ վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց անունից, նրանց փոխարեն համապատասխան համայնքի բյուջե վճարվում է ՀՀ տարեկան պետական բյուջեով այդ

նպատակի համար նախատեսված գումարներից, ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

Հոդված 4. Սահմանամերձ համայնքների՝ Ադրբեջանի Հանրապետության տարածքից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների հետեւանքով օթեւանից զրկվելու դեպքում բնակիչներին Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին մեկամսյա ժամկետում ապահովում է համարժեք օթեւանի հնարավորությամբ՝ նույն համայնքի տարածքում:

Հոդված 5. Սահմանամերձ համայնքներում եւ դրանց հարակից տարածքներում ականների պայթյունից, կամ Ադրբեջանի Հանրապետության տարածքից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների հետեւանքով վիրավորված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է պետպատվերի շրջանակներում:

Հոդված 6. Սահմանամերձ համայնքներում եւ դրանց հարակից տարածքներում ականների պայթյունից, կամ Ադրբեջանի Հանրապետության տարածքից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների հետեւանքով զոհված քաղաքացիների ընտանիքներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրվում է միանվագ օգնություն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով և չափով՝ հուղարկավորության և գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման ու տեղադրմանը ծախսերի համար:

Հոդված 7. Սույն օրենքի 4-6 հոդվածների դրույթները չեն տարածվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա:

Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2018 թվականի հունվարի 1-ը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ	Փոփոխությունն առաջարկող պատգամավոր	Առաջարկություն	Ընթացքը
1.	<p>ՀՀ ԱԺ պատգամավորներ</p> <p>Խ. Հարությունյան,</p> <p>Վ. Բաղդասարյան,</p> <p>Ա. Մինասյան</p>	<p>Առաջարկվել է սահմանել տրամադրվող փոխհատուցումների քանակական գնահատականներ</p>	<p>Ընդունվել է, ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածում կատարվել է համապատասխան լրացում</p>
2.	<p>ՀՀ ԱԺ պատգամավոր</p> <p>Ա. Հովհաննիսյան</p>	<p>Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ պարբերությունից հանել «այդ թվում բնական գազի օգտագործման բաժանորդ չհանդիսացող անձանց դեպքում» բառերը</p>	<p>Ընդունվել է, նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ պարբերությունից հանվել են «այդ թվում բնական գազի օգտագործման բաժանորդ չհանդիսացող անձանց դեպքում» բառերը</p>
3.	<p>ՀՀ ԱԺ պատգամավոր</p> <p>Վ. Նահապետյան</p>	<p>Առաջարկվել է հստակեցնել նախագծի 3-րդ հոդվածով հողի հարկի և այդ հողերի վրա առկա անշարժ գույքի գույքահարկի՝ փոխհատուցման ենթակա հողատեսքերի ցանկը:</p>	<p>Ընդունվել է, նախագծի 3-րդ հոդվածում կատարվել են համապատասխան փոփոխություններ</p>

4.	<p>ՀՀ ԱԺ պատգամավոր Մ. Մելքունյան</p>	<p>Առաջարկվել է հաշվի առնել, որ գազի և էլեկտրաէներգիայի սակագների 2014 թվականի թանկացումից հետո սպառումները կարող էին պակասել:</p>	<p>Ընդունվել է, որպես բազային սահմանվել են 2013 թվականի գազի և էլեկտրաէներգիայի սպառման ծավալները</p>
5.	<p>ՀՀ կառավարություն</p>	<p>Հստակեցնել, որ 4-6-րդ հոդվածներով սահմանվող դրույթները կարգավորում են միայն սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ծագած խնդիրները: Նախատեսել նաև 4-րդ հոդվածով կարգավորվող խնդրի լուծման այլընտրանք:</p>	<p>Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Նախագծի 4-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ, իսկ 7-րդ հոդվածը լրացվել է նոր մասով:</p>